## 6. ՈՍԿԻ ԾԱՄ

Կէլնի, չէլնի մեյ խատ թակավոր: Էսա թակավորուն մեյ խատ լաճ կէլնի: Էսա լաճ շատ բաբացյիթ, շատ ոժով կէլնի: Թակավորն ի ի՞նչ լեզու, որ կթնփըցուցի, չի կանա ուր լաճուն խոսք խասկըցուցե, պըսակե: Լաճնի թիվքեր չըլդե, կայնե քյաղքյի տռան վերեն, վով որ ընցընի տնռնա, պիթունեն կթալի գետին:

Խորն էլ ասեյ ի, թե. - Հայրիկ. ես ուխտ եմ արե, երբ որ գիգնից տնհա ոժով մարթու ռաստ էկա, որ իմ մեճքյ իտեր գյետին, էնոր ես պսայվեմ, թե չէ՝ անխնար պնն ի, ես չեմ պըսակվե:

Ավուր մեկ էսա թակավորու լաճ գյընն կայնիր էր վեր քյաղաքյի տռան, կտեսնա, որ էն տեխեն մեյ խատ կարիբ բնզրգյնն կուգյն, կմտնի քյաղաքյ: Էսա լաճն ի ճաման կխասնի էսա բնզրգյննի մարթերաց մեկ-մեկ կպըռնի, կթնլի գյետին, կխասնի ճնն վերջ, կտիսնա, որ մեյ խատ թոսուն շաճեղ տղեմ թիվքեր չըլդե, մեյ խատ խաստ չոմախ փետմ պռնե ծեռ, քեռլոզ քեթրե մեյ խատ սիվդակ ըղդամ զըմբյոկ պըռնե, գյեռ յավլա՛շ, յավա՛շ կուգյն:

Թակավորու լաճն ի, կխասնի մոտ էսա լաճ, մեյ խատ թիվով կզարկի իսոր, էսա լաճ ըսկի էնտեղեր չէլնե, մեյ խատ էլ կզնրկի, բնզըրգյննի լաճն ի կտնռնն մեյ խատ կխոոմըռն վեր թակավորու լաճուն, աման գյընն ծեն չի խանե: Թակավորու լաճն ի, կէրթն էնտեխ. կուգյն, էնտեխ մեյ խատ էլ թիվով կզնրկի էսա լաճուն, մնռննն էն ի. որ էտա զնրկելով բնզրգյննի լաճուն իսկի գյետին:

Բուզրգյննի լաճն ի, կտնռնն թակավորու լաճուն կասի. - Ա՛յ տըղա, քյո բնլեն առ, զզնից զատացի, ի՞նչ կուզես զզնից, ես քեֆ չունեմ, դու՝ վով, ես՝ վով, ի՞նչ պնն ունես խետ զիկ:

Թակավորու լաճն ի, որ էսա խնբնր կըլսի, կասի. - Ես կուզեմ խետ քյե մեյ խատ գյոկաշ թալեմ:

Բնզրգյննի լաճն ի. կասի. - Այ շաճեղ տղա, տնհ խեղճ իս, ես քյե կասեմ առ քյո բնլեն, զզնից զատացի, ի՞նչ պնն ունես խետ զիկ, ընչի՞ պիտի խետ զիկ գյոկնշ թնլես, քյո զոռն ընչի՞ վեր զիկ կէրթն:

Թակավորու լաճն ի, կասի. - Չէ՛, իմ խոր քյաղքյի նտնթն էն ի, վով որ էսա քյաղաքյ մըտնի. պիտի խետ զիկ գյոկաշ թնլի, թե չէ՝ վիզ կզնրկեմ:

Բնզրգյննի լաճն ի, որ էսա խնբնր կլսի. կասի. - Գյու՛լնշ, խո գյոկնշ, - ճաման կխասնի թակավորու լաճուն կես տարեկան տղում պես կվերուցի խետ ուր բոյեն ճըլըփալեն կտըփի գյետին:

Թակավորն ի, ուր փենջարից, որ էսա պա̈ն տիսավ. առա̈ճ շատ պարկացավ, որ ուր լաճուն տըփեցին գյետին. սորա ուրախցավ, ասաց. - Ջա̈հնա̈մ, թե իմ լաճուն տըփեցին գյետին, չէ՞ որ իմ լաճ ուխտ էր արե, որ չհուր ինոր չի թա̈լեն գյետին, չէր պսակվե, մկա տըփեցին գյետին, կպերեմ, կպսակեմ քյանի որ չեմ մեռե:

Թակավորն ի, մարթ կեռոխկի ուր լաճուն կկանչի: Լաճ որ կուգա̈ թակավորն ի կասի. - Բալամ, տհու զըմեն գյախ կասիր, թե հայրի՛կ, ես ուխտ եմ արե, չհուր որ իմ մեճք չի տնեն գյետին. ես չեմ փսակվե. էսօր ես տեսա, որ բազրգյա̈նի լաճ քյե տըփեց գյետին, մըկա էլ ի՞նչ կանաս ասե, արե քյե պսակեմ, քյանի որ սաղ եմ, էտա մեկ դարդն ի մնացե զիկ, էն դարդն էլ թող էլնի իմ սըրտեն:

Թակավորու լաճն ի կասի. - Թակավոր ապրած կենաս, ես հա̈լա̈ չեմ պսակվե, իմ աչկերաց դեմ չհուր էսօր փա̈րդա̈ կեր. ես կիտի գյեր մեչ էսա աշխըրին մենակ ես ի, էլ չըկեր զիկ պես բա̈բա̈գյիթ մարթ: Աման էսօր տեսա, որ մա̈ն գյա̈ր զզնից դըհա բա̈բա̈գյիթ մարթեր կան աշխար: Ես պիտի էրթամ աշխար փըռալ: Հալա̈ շատ պա̈ն կաւ, որ ես չեմ կիտե, համան շուտըմ ոտքերս կապեմ ի՞նչ, ես կէրթա̈մ կփռամ, աշխրի չարն ու պա̈րին մեջ խատ խորոտըմ կխսակընամ. էլ չեմ պսակվե:

Թակավորու լաճն ի, էսա պա̈ն որ կասի, ուր խոր կաց պա̈րիվ կանի, կէլնի տյուս, կէրթա̈ տեխ բա̈զրգյա̈նի լաճ:

Թակավորն ի, էնկսնդար կուլա̈, կմըռմըռա, ուր լաճուն ա̈ղա̈ճա̈նքյ կենի. կասի. - Բաղա՛մ, ես ըխթիարցեր եմ, իմ ումուտ-ապավեն տհու ես. տհու իմ մեռնելուց սորա թակավոր պիտի էլնես, արե մավերե, տեղ մ'էրթա:

Թակավորու լաճն ի կէրթա̈ մոտ բա̈զրգյա̈նի լաճ, կասի. - Է՜յ, բաբա̈գյիթ տղա, չուր էսօր հա̈լա̈ իմ մեճք գյետեն տըրող չէր էլե, քանի որ տհու իմ մեճք տրեցիր գյետին, ըստըրիս սորա տհու զիկ ախպեր, ես քյե՝ ախպեր, տհու տե՞ր, ես էլ էն տեղ: Վար հասըլի կենի խետ բա̈զրգյա̈նի լաճուն ճա̈մբա̈խ կէրթա̈:

Էսա բա̈զրգյա̈ն ի շատ կէրթա̈, քիչ կէրթա̈, կխասնի մեջ խատ ծովում քա̈նա̈ր, էնտեղ ըղտեր կծախեն, ապրանքներ կլըցեն մեչ գյա̈միներաց, որ ընցընեն ծովու էն մեկէլ իրես:

Իրեք օր կիշեր-ցերեկ վեր ծովուն կէրթա̈ն, բիրդա̈ն փըոթընա կէլնի, երկինք, ծով կխառվի իրար, գյա̈մեն ի կէրթա̈ էնտեխ. կուգա̈ ըզտեխ. կզա̈րկվի քյարիմ, կէլնի կտոր-կտոր: Էսա էրկու ախպերներն են մեջ մեկ կտոր տախտակ իսկեն ինոնց ծեռ, կնստեն վեր էտա տախտըկներաց ուրենց թալիմ կանեն աստծուն, վեր ծովու իրեսեն կէրթա̈ն:

Ծովն ի բա̈զրգյա̈նի լաճուն ավուր մեկ կխանի քա̈նա̈ր: Էսա լաճն ի, որ ծովուց կէլնի տյուս խելքա̈մա̈ղ-խեղքա̈մա̈ղ ճա̈մբա̈խըմ կուտա ուր առճև կէրթա̈: Շատ կէրթա̈, քիչ կէրթա̈, աստված կիտի, կխասնի մեջ խատ քյաղաքյ: Քյանիմ օր մեչ էտա քյաղքյին պարապ-սարապ կէրթա̈ էն գյըլխ, կուգյա̈ էսա գյըլխ: Ավուր մեկ թակավոր իլիր էր մեչ ուր քյաղքյին կփըռեր, էսա լաճուն, որ կտեսնա, իսոր բոյին, բա̈բա̈գյիթությունին շատ կխավնի, կկանչի կասի. - Է՜յ շահել տղաւ, զիկ ըսկուն կէրևա, որ տհու կարիբ մարթ ես, ո՞ր երկրեն ես, ընչի՞ ես իկե ըստեղ:

Բա̈զրգյա̈նի լաճն ի, կասի. - Թակավոր ապրած կենա, ես Վարազկերտու քյաղքյեն եմ, խեղճ մարթըմ եմ. իկեր եմ ըզտեխ կասեմ բալքյի կործըմ կըննեմ, ապրեմ: Ամա էսա չորս խինգյ օր էլա̈վ, իկիր եմ. էսա քյաղաքյ անոթի, ծարավ կփըռամ մարթ չիրիշկա վեր զիկ:

Թակավորն ի մեկ էլ կիրիշկա էսա լաճու ջահելութեն, էսա լաճու խա̈բա̈ր տալ,

մեջ ուր մըւտաց կասի՝ էսա լաճ կա չկա վախտով շեն տան տղա էլեր ի, իսոր խմբար տալ, իսոր իրմր տեպնել աղքատ խեղճ մարթու պմն չի: Վարճասըլի էսա լաճուն կառնի, կտանի ուր սարեն, կանի ուր սոլ շիտկող:

Բազրգյմնի լաճ թող թակավորու քեոշկ սարի մեջ թակավորու սոլեր շիտկի, մենքյ տառնանքյ տեխ իսոր ախպերազյիր թակավորու լաճ:

Թակավորու լաճուն էլ ծովու դալկեքյ կտանեն, կխանեն ուրիշ աշխարըմ, էսա լաճն ի, որ կէլնի տյուս, մեյ խատ ճոչ սիվտակ ճմմբախըմ կտիսնա, կենեն խետ էտա ճամխուն կէրթմ: Ծատ կէրթմ, քիչ կէրթմ, կխասնի մեյ խատ քյաղաքյըմ, էտա քյաղքյի մթրուֆ յոթ խատ պմտմն կեր քյմշուկ: Թակավրու լաճն ի առճին պատնի տոնից կմտնի ներս, կիրիշկա, որ մարթ չկա, էն մեկէլ պատնի տոնից էլ կմտնի ներս, էլմէլ մարթ չի տեսնա, վարճասըլի յոթ պմտնից էլ կմտնի ներս մարթու նմուշ չի տեսնա: Լաճն ի կմտնի քյաղքյի շուկեն, կտիսնա, որ ինչ գյեռ զըմեն շուկեք պմց, դյկքըճներ լսմեյամ լցուկ, ինչ որ լեզկտ կկտրի կա, ամմն մարթ չկա: Լաճն ի, որ էսա պմն կտիսնա, զմրզմնդ կուտա վերեն, չկր իրիկուն մըթան լաճն ի, կենի ըզտեխ, կենի էնտեխ, որ տուն, որ դյուքան, որ փողան որ կմտնի, կատում բիլա չի տիսնա: Լաճն ի, որ էսա կտիսնա, կշիվարի, կմնա, կասի՝ աշեբ էսա քյաղքյի միլմթ բիթուն մեկ տեղ ըըըկընա շնով, խավքով, կատվով, դկ՞ր ին կնմցե: Բիրդմն կտիսնա, որ մեյ խատ տանմ փենջարից ճրաքյի լկս կէրևա, լաճն ի ճամման դեմ կանի տեխ էտա տուն, կէրթմ կմտնի ներս:

Լաճն ի, որ կմտնի ներս, կտիսնա գյեռ մեյ խատ խուրնի-խրեղեն ախչիկմ նստե նըխշ կանի, ճրաքի լոս զմրկե վեր ծամերաց, էտա ծամերաց շառավըլքներն էլ զմրկե էօդի պատեր:

Էսա ախչիկն ի խետ որ կտիսնա էսա բմբմգյիթ թոսուն լաճուն, սիրտ կչըխփա վերեն, տեղից կէլնի վեր, կուգյմ էսա լաճու ծեռ կպռնի կտանի ներս նստցուցի: Լաճն ի ճմլմ չի նստե, կտիսնա, որ մեյ խատ մջլմշեպ պառավ փընչփընչալեն կմտնի ներս:

Պառավն ի, խետ որ կմտնի ներս, աչք կինի էսա լաճուն, կասի. - Վա՛յ խողածին, պմրով ես իկե, խմզմր պմրով, վմղուց կեր, որ մարթու միս չի կիրե, ատըմներս կեռեր, իս իրիկվան քյւսղցրիկ ընթրիս, տկւ խմզմր պմրով ես իկե, մենա՞կ իս, էլ ուրիշ մարթ չկա՞ խետ քյե:

Պառավն ի, էսա որ կասի ատըմներ կկըռճըտացուցի, կխասնի որ լաճուն ուտի:

Պառվու ախչիկն ի ճամման շոտըմ զենքյ կտըփի մոր մռճև կկըտրի, ծեռքյեր կթսղի մոր վզով, կասի. - Մարե՛, մարե՛, մեյ քյւսղաքյ սաղ կերար, ես քյե պմմ չասի, ամման տկւ, որ զիկ կուզիս, էսա մարթուն չես ուտե, ես էսա մարթ կառնեմ:

Պառավն ի, որ էսա պմն կլսի, կասի. - Ախչի՛կ, բալամ, մա՛նե, մէ՛լնե, ես վմղուց կա մարթու միս չեմ կերե, մկա որ մարթու խոտ առի, ծեռքերս ոտքերս կտկղա, թող ուտեմ:

Ախչիկն ի կասի. - Չէ՛, տկւ մեկ քյաղաքյ կերար, ես ծեն չխանեցի, էսա էլ զիկ կխասնի, ախր աստված չանի, որ վմղ տկւ մեռնես, ես մենակ ի՞նչ պիտի անեմ, ի՞նչ կէլնի իմ ճմլ:

Պառավն որ կտեսնա, թե ճար չկա, ուր ախչկան սիրտ տաքցեր ի վեր էսա լաճուն, կասի. - Հայդե բալամ, էսա մեկն էլ թող քյե էլնի, մմդմմ տկւ էտա կանդար կուզես իտոր, եկեքյ չեռքյեքյ ծե օխնեմ:

Ախչիկն ի լաճու ծեռ կպռնի, կուգյմն կչեռքեն պառվու մռմճ, պառավն ի ծեռ կտնի վեր էրկսի գյըլխներաց կօխնի, կէլնեն իրիկ կընիկ:

Ավուր մեկ էսա պատավ կմեռնի, կտանեն կխորեն: Լաճն էլ նետվանեղ կառնի, կասի՝ մեջ խատ էրթամ ավ անել:

Կէրթա սար, ըզտեխ կփռա, էնտեխ կփռա, ավ ռաստ չի գյա: Իրիկվան տեխ որ կուգի տառնա տուն, կտիսնա, որ մեջ խատ վերու ոչխարմ գյեռ նստէ վեր քյարին, լաճն ի կուրսախնա, նշան կպռնի, որ զառնկի. պիրտնն էտա վերու ոչխար կտառնա մեջ խատ խնձլիվոր մարթ, կնստի վեր քյարին, լաճն ի կէլնի վեր, որ էրթա մոտ էտա խնձլիվոր, կտիսնա գյեռ ի՞նչ, խալիվոր վերի ոչխար ի, կչեռքյի, որ զարկի. էլմել կէլնի խազիվոր մարթ: Թակավորու լաճն ի շատ չաբալամիշ կէլնի, չի կանա զառնկէ: Կմթնի, ւիեռրփեռշման կտառնա տուն, ամսան ամոթու ուր կնկան չասէ, զենքյ ուր կասի, ավառտա ես խիալով ի իմ աչկին ըսկուն կէրնէր:

Էն մեկէլ օր թակավրու լաճն ի գյըռնա կէրթա ավ անել: Գյըռնա էտա վերու ոչխար կտիսնա, կչեռքյի նշան կպռնի, որ զառնկի. կտիսնա, որ վերու ոչխար կտառնա մեջ խատ մուրռտով խնձլիվոր, լաճն ի չուր իրիկուն չաբալամիշ կէլնի, չի կանա զառնկէ: Իրիկուն կէլնի մռութ մալոզ կտառնա տուն: Կնիկն ի, որ կտիսնա, թէ ուր մարթ իրիկ մռութ ի, կուգյա կփաթըթվի վիզ, կասի. - Ասա՛, խենք էսօր ընչի՞ մռութ ես, ի՞նչ էլեր ի քյէ:

Թակավրու լաճն ի, էլ չկանա պախէ, կասի. - Վալա՛, ճալ-ճեքյամթ էսա էրկու օր ի, ես կէրթամ ավ անեղ, կտեսնաս որ տանոտնկ կտառնամ. գյեռ նստի վեր քյարին ես կչեռքյեմ նշան կպռնեմ, որ զառնկեմ, բիրդան էտա վերու ոչխար կտառնան մեջ խատ մուրռտով խնձլիվոր, կնստի վեր քարին, կէլնեմ կկայնեմ, որ էրթամ մոտ խնձբնր տամ՝ կտիսնամ, որ էլեր ի վերի ոչխար, վար ճառըլի ստատմէ չհիր իրիկուն չաբալամիշ կէլնեմ, չեմ կանա զառնկե, էլեր ի զիկ աֆքյար:

Կնիկն ի, որ իրկան էսա խնապառ կլսի, մեջ խատ կծծղա, կասի. - Որ տհու քյառսուն տարի էլ էրթաս էն վերի ոչխար չես կանա զառնկե, էն իմ օղորմած մոր կթած էծն ի, իմ մեր, որ կէրթեր սար ավ անել, կնեղաներ, կնստեր էսա էծ կուգյեր կկայներ իմ մոր գյըլխու վերեն, պըտկըներ կտներ իմ մոր պերան, իմ մեր իտոր կաթ կծծեր, իտոր խամար էսա էծուն արաց սէյրի, որ ավչիներ չէլնի զառնկեն:

Թակավորու լաճն ի կասի. - Ապա ի՞նչխ պիտի անենք, որ իտոր սպանենք, մեկղիր զիկ էլեր ի աֆքյառ, չհիր որ ես էտա էծուն չսպանեմ, չեմ կանա տանտառէ:

Ախչիկն ի կասի. - Առա իմ գյըլխու մազերից մեկ խատ մազ, փաթըթի արա տասստու, տար խետ քե, խետ որ էտա վերի ոչխար կտեսնա իմ ծամ տիր վեր քյարին, քյո նետվանեղն էլ շոտմ տիր վեր իմ ծամին, խետ որ քյո նետվանեղ տնես վեր իմ ծամին, էլ էն չի կանա էլնէ մարթ, տհու խավասով նշան պռնի, զառնկ:

Թակավրու լաճն ի խետ որ էսա կլսի շատ կուրախնա, ճաման կընգնան ծամ կառնի կփաթըթա կանի պզտիկ տասստեմ, կառնի ուր նետվանեղ, կվնգի տեխ սար: Ախչիկն ի ետևանց կբոռա, կասի. - Որ վերի ոչխար կզառնկես, կպռծնես, չէլնեմ, չիմանամ իմ ծամ մոռնաս էն տեղ, ճնանսա առ պե խետ քյէ, տուր զիկ, զիկ լազըմ ի:

Թակավորու լաճն ի, կէրթա սար կտիսնա, որ էն վերու ոչխար էլմ էլ նստերի վեր քյարին, ճաման շոտըմ ուր կնգնան ծամ կտնի վեր քյարին, ուր նետվանեղն էլ կտնի վեր էտա ծամին, կչեռքյի, էլ վերու ոչխար չի տառնա մարթ: Թակավորու լաճն ի խավասով նշան կպռնի կզառնկի, խետ որ կզառնկի վերու ոչխար գլոխվեր քյարից կուգյա տակ:

Թակավորու լաճն ի, խետ որ կտիսնա թէ վերու ոչխար զարկըվավ, ուրախութենէ խելքյ կէրթա, ճաման կառնի ուր նետվանեղ, կվազի տեխ վերու ոչ-

խսւր, ծամ կմոռնա էնտեղ: Էտա կտոր գյախ բիրդան քամիմ կէլնի էտա մազ կվերուցի կտանի, կթաղի ծովու էնմեկէլ իրես, ուրիշ աշխարըմ:

Թակավորու լաճն ի վերու ոչխար կշըկի, ուրախ-ուրախ կվազի կէրթա̈ տուն: Կնիկն ի, որ կտեսնա ուր մարթ վերու ոչխար զա̈րկեց, ավից էկավ, կխառցուցի, կասի. - Իմ ծամ պիրեցիր, ու՞ր ի, տուր զիկ:

Թակավորու լաճն ի կասի. - Վալա՛ մոռցա, մնաց էն տեղ:

Ախչիկն ի կասի. - Չէ՛, չէլնե. շուտըմ վազի կնա̈ էնտեղ բաղքյի կնտնես պերես:

Թակավորու լաճն ի կէլնի կէրթա չո̈ւր իրիկուն կֆռա: Ծամ-ծամ, ծամ չկա, կուրիսեր ի: Իրիկուն կուգյա̈, կասի. - Կուրիսեր ի, չկնտա:

Ախչիկն ի կասի. - Աղեկ չարեցիր կուրիսիցիր էն ծամից մե շատ գա̈րսւր պիտի գյա̈:

Էսա իրիկ կնիկ թող մնան ըստեղ ուրենց քեֆ քյաշեն: Մենքյ էրթանքյ տեխ էն ծամ, որ քամին քշեց տարավ ծովու էն մեկէլ իրես:

Ավուր մեկ խովըվներ մեչ տաշտին ոչխար կա̈րածեն, կտիսնան, որ գյեռ մեչ տա̈շտին պա̈մ արիվու պես կփեյքտա, խովըվներն ին, կէլնեն կվա̈զեն, կտեսնան, որ ի՞նչ. գյեռ մեյ խատ ծամ ի, որ փաթըթեր են արեր ին պզտիկ տաստեմ ծամ, մազի ոսկու թել, ըսկուն որ արև զարկե վերեն քյանց ոսկին տա̈ո̈ա շատ կփեյփտա:

Խովըվներն ին, որ էսա ծամ կտիսնան, կասին. - Իկեք էսա ծամ տանինք տանք մեր թակավորուն, մեր թակավոր մե փա̈րա̈ կուտա:

Կառնին էտա ծամ, կտանին կուտան թակավորուն:

Թակավորն ի, որ էսա ծամ կտեսնա, պերան կմնա պա̈ց: Էտա ծամ կտնի ուր էօղի փենջարեն, որ արիվ զարկի վերեն թամաշա անի:

Ավուր մեկ մեյ խատ ծըծյում խեծնող պառավ կուգյա̈ կասի. - Թակավոր ապրած կենաս, տո̈ւ որ էտա ծամ տիսեր իս ըտըսկըրնեմ խեյքըտ կնացեր ի, ապա որ էտա ծամի տե՞ր տիսնաս, ի՛նչ կանես:

Թակավորն ի, որ էսա պա̈ն կլսի, կասի. - Պառա՛վ, ես քյո բա̈խտն եմ, քյո աստծուն ասա խենքյ իտոր տեր վովի՞, դո̈՞րի:

Պառավն ի կասի. - Թակավոր ապրած կենաս, էտա ծամի տեր մարդակեր պառվու ախչիկն՝ Ոսկի ծամ խանըմն ի, մկա էլ մեկ խատ բաբազյիթ մսւրթըմ ատե նստե, որ տո̈ւ քյո ա̈սքրներ սաղ առնես էրթաս վեր ինոր, էտա մարթու մեկ մատն էլ չիս կանա էօլեռրե:

Թակավորն ի կասի. - Պառա՛վ, ես քյո բա̈խտն եմ, տո̈ւ կա չկա իտոր ճարն էլ կիտես, ճարմ արա էտա Ոսկի ծամ խանըմ պե զիկ, ի՞նչ կուզիս կուտամ, մա̈ռա̈խ մանե:

Պառավն ի կասի. - Թակավոր ապրած կենաս, իս յոթ իմ կշռանքով քյեզնից ոսկի կուզեմ, ուրիշ պա̈ն չեմ ուզե:

Թակավորն ի կասի. - Պառա՛վ, թե չէ յոթ քո կշռանքով՝ տըսնըչորս քյո կշռանքյով, քյե ոսկի, տո̈ւ կանաս ո̈ամամ պե:

Պառավն ի կաց պա̈րիվ կանի թակավորուն, կոպյա տուն, կխեծնի ուր ծըծո̈մ, կէլնի վեր ծովուն, շատ կուգյա̈, քյիչ կուգյա̈. կուգյա̈ կխասնի ծովու էսա մեկէլ իրես, ծըծյում կխոթի մեչ ավազին, ինքյ կուգյա̈ Ոսկի ծամ խանըմի քյաղաքյ, իրիկվան մթին Ոսկի ծամի էօղի ճրաքյ որ կտիսնաւ, տեմ կանի դողրի կէրթա̈ կմտնի ներս, պա̈րիվ աստծու պա̈րիվ կանի, կնստի:

Թակավորու լաճն ի կասի. - Պառավ, տո̈ւ վո՞վ ես, ո՞ր տեղեն կուգյաս, ո՞րտեղ կէրթա̈ս:

Պառավ կասի. - Քյե մեռնեմ ջահել տղա, իս խեղճ պառավմ եմ. իմ ջուխտ լաճեր մեչ մեկ օրվան մեռան. իս էլ իմ սոտի մըռմըռից ընգայ սար ծոր փռալ էս օր էլ էկա էսա քյաղաքյ. էլ կանդամ չի մնացե մեչ ծնգյվերացս, տհու էլ որ կաս իմ օղորմած ճոչ լաճու նմուշն ես, աստված որ կսիրես. զիկ պախի մոտ քյե. ծե խզմաթ կանեմ, իմ լաճու խասրաթն էլ քյեզնից կառնեմ:

Ոսկի ծամ խանըմն ի կսռի. - Դե՛. էլի ջա̈հնա̈մ, էլի ջաղհու պառավ, մե մարթ լազըմ չի:

Պառավն ի զենքյ կտփի վեր ախչկան ոտաց, կուլա, կմըռմըռա. աղաճա̈նք կենի, որ ինոր չի խանի տհուս:

Թակավորու լաճն ի, որ էսա պառվու արցունքներ կտեսնա, դիժար կուգյա̈, կասի. - Մառախ մ‘անե, պառա՛վ, ես քյե կպախեմ մոտ զիկ, Ոսկի ծամ խանըմ քյե տհուս չի խանե:

Ոսկի ծամ խանըմն ի. ինչ կանղար որ ուր իրկուն գա̈ղտիկ, ա̈շքա̈րա̈ կամոզի, կասի. - Արե՛, մ‘անե, մ‘էլնե էսա պառվուն խան մըլի տյուս, ախըր իմ մերն էլ պառավ էր, ես կիտեմ պառվըներաց տակ շատ ֆեղ ֆանդ կէլնի, արի տհու զիկ ականչ արա, իսոր մըլի տյուս, վալա մեկ օր տհու իսոր իրեսանց զա̈րա̈ր կտեսնաս:

Թակավորու լաճն ի. մեղ խատ կծըծղա, կասի. - Ախչի՛, տհու էլ շատ վա̈խկոտ ես, էն պառվու քյա̈մա̈լն ի՞նչ ի, ի՞նչ պիտի անի մե:

Վարհասըլի էսա պառավ ժամանակըմ կմնա իսոնց մոտ:

Ավուր մեկ էսա պառավ թակավորու լաճուն կասի. - Էսօր զիկ իզին տուր իս Ոսկի ծամ տանեմ ծով, մեղ խատ խորոտըմ լողկըցուցեմ պերեմ:

Թակավորու լաճն ի կասի. - Տա՛ր:

Ինքն էլ կպառկի, կքյըննի:

Պառավն ի. կառնի Ոսկի ծամ կտանի ծովու ա̈փ. իսոր ծամերաց կպռնի կքյաշի, կտանի մոտ ուր ծըծյում, կմտուցի մեջ ծըծմին, կխեծնի վեր ծըծմին, կինի ճա̈մբա̈խ, կէրթա̈:

Թակավորու լաճն ի չհուր իրիկուն կաչկի, կտիսնա, որ ուր կնիկ ինա̈ն պառավ չէկան, կասի՝ ի՞նչ էլավ իսոնց:

Կէլնի ուր նետվանեղ կառնի կէրթա̈ ծովու ա̈փ, կտիսնա, որ մարթ մաղաթ չկա, ըզտեխ էն տեխ կֆըռա, բիրդան կտիսնա, որ մեկ կտոր թուղթմ գյեռ ծովու քյա̈նա̈ր, կկըզվի էտա թուղթ կվերուցի կկյա̈րդա̈, որ ի՞նչ՝ «Զիկ տարան ֆիլան թակավորու խամար, քո սիրած պառավ զիկ տարավ, չհուր քյառսուն օր ժամանակ քյե, էկար, էկար, չէկար՝ իս զեհիր կխմեմ, կմեռնեմ»:

Թակավորու լաճն ի, որ էսա թուղթ կկյա̈րդա, ծամեր կտիզանա, կասի՝ «Վայ, պառավ, վայ, մա̈գյա̈ր տյու ըռըսկըա̈ն, պեպա՞խտ իր»: Էլ ըզտեխ էնտեխ ինել ֆա̈յդա չանե, համան կէլնի կխեծնի ուր ծեն, կինի ճա̈մբա̈խ:

Թող թակավորու լաճն ինի խետ ուր ճա̈մխեն, մենքյ դառնանքյ տեխ Ոսկի ծամ խանըմ, որ պառավ խափըլութնով փախցուց:

Էսա պառավն ի Ոսկի ծամ խանըմին կտանի թա̈ալիմ կանի ուր երկրի թակավորուն: Էսա թակավոր կխանի քյեսան պառվու կշռանքով ոսկի կուտա էսա պառվուն: Ինքն էլ ա̈մր կանի, որ խարսնըսի թա̈ղա̈րյուք տիսնան:

Ոսկի ծամ խանըմն ի թակավորուն կասի. - Թակավոր ապրած կենաս, քյառսուն կիշեր, քյառսուն ցերեկ խարսնիս պիտի անես, չհուր էսա քյառսուն օր չի թըմըմի

տհու իմ էօղեն ոտ պիտի չի կոխես, թե որ իմ խոսք ականջ չանես, ես զեհիր կխմեմ, զիկ կսպանեմ:

Թակավորն ի կասի. - Խա՛, թող քյո խաբարն էլնի:

Թակավորու լաճն ի. շատ կուգյա, քյիչ կուգյա, վարհասըլի կխասնի էսա թակավորու քյաղաքյ, կտիսնա. որ գյեռ խաւրանսի մեջ են, կխառցուցի կասի՝ «Ի՞նչ պնս ի», կասեն՝ որ «մեր թակավոր մեյ խատ ոսկի ծամ ախչիկ մի կընտե կպսակվի, ամման ախչիկ մասե, դյունյա մննլյնքյի»:

Թակավորու լաճն ի կէրթն մեյ խատ տննմհուրշի կկընտըռնի, կասի, զիկ մեյ խատ քյառսուն կըղրննոց գյոտզ շինի:

Տննմհուրշին ի, մեյ խատ քյառասուն կըղրննոց գյոտզ կշինի: Թակավորու լաճ կուգյա իսոր քյառսուն խատ ոսկի կուտա, կասի. - Էսա գյոտզ կկախես քյո խանութի տռան նռճև, որ քյո թակավոր կուգյա, կասի թե իսա գյոտզ ընչի՞ ես շինե, վո՞վ էսա պիտի պննցուցի, տհու ասա՝ թակավոր ապրած կենաս, մարթ ի, աշխար ի, կէլնի որ քյե դյուշման կէլնի կուգյա վեր քյե կռիվ, քյո նհայլու մեջեն կէլնի որ մեյ խատ բննբնգյիթ մարթըմ տյուս կէլնի, էսա գյոտզ կառնի, կէլնի քյո դյուշմընի տեմ կռիվ կանի:

Աղորթմանց էն մեկէլ օր թակավոր կէլնի մեջ քյաղաքյին փըռսալ, կուգյա էսա գյոտզ կտիսնա, կտառնա տննրպըռին կխառցուցի, կասի. - Տնրպին ախպեր, էսա գյուտզ ընչի՞ շիներ ես, վո՞վ կանա էսա գյուտզ ուր տեղեն իրար տա:

Տնրպին ի կասի. - Թակավոր ապրած կենաս, մարթ ի, իսան ի, վո՞վ կիտի, կէլնի որ մեկ օր քյո դյուշմահոտեր կուգյան վեր քյե կովի, քյո նհալու մեջեն բնլքի տա մեյ խատ բաբազյիթ մարթ տյուս կուգյա, էսա գյուտզ կառնի կէլնի քյո տյուշմընին խեռ կռիվ կանի:

Թակավորն ի կասի. - Աֆնրը՛մ, տննրպին, տու ծիկ շատ կուզես, կխանի ուր շեռքից քսան խատ ոսկի կուտն տննրպըռին:

Էն մեկէլ օր թակավորու լաճն ի, կուգյա տննրպըռին կասի. - Տնրպին ախպեր, մեյ խատ քյառսուն կըղրանոց թուր շինի, կախի քյո խանութի նռնն, որ քյո թակավոր կուգյա կխառցուցի, թե էտա թուր ընչի՞ խամար շիներ ես, տհու ասա, թե վո՞վ կիտի, թակավոր, տու դյուշմընի տեր ես, էսա շիներ եմ, որ մեկ օր, որ քյո դյուշմըներ գյան վեր քյե կռիվ, բնլքի տա քյո ահալու մեջեն մեյ խատ բննբնգյիթ մարթ տհիս էլնի, էսա թուր առնի էրթա վեր քյո դյուշմընին կռիվ:

Տնրպին ի մեյ խատ քյառսուն կըտրննոց թուր կշինի, կկախի ուր տհուքնի նռճև: Աղորթմանց թակավոր կէլնի քյաղաքյ փըռսալ, կուգյա էսա տննրպըռի տյուկնի նռճև կկայնի կասի. - Տնրպին ախպեր, էսա քյառսուն կըտրննոց թուր ընչի՞ ես շինե:

Տնրպին ի կասի. - Թակավոր ապրած կենաս, էն բննբնգյիթ մարթ որ պիտի էլնի էսա գյոտզ պննցուցի, էսա թուրն էլ կանա պննցուցե:

Թակավոր կասի. - Վալա տհու շատ խելացի մարթ ես, - կխանի քսան ոսկի էլ կուտա, կթողնի կէրթն:

Եռսունևին օր թըմըմիր էր, մընացեր էր մեկ օր: Ոսկի ծամ խանըմ զեհիրի կննտննխ պռներ ի ծեռ կսկծու չի կանա տեղեն իրար տիպնե, ահա մնացի դեռըմ ահնթներ կխամպըրի, որ զեհիր խմի: Բիրդնն խննբնր կտանեն թակավորուն, կասեն, թե մեյ խատ մարթըմ փննյդն իլեր ի, տննրպըռի շինած քյառսուն կըտրննոց գյոտզ պռնե մեկ ծեռ, քյառսուն կըտրանոց թուր պռնե մեկ ծեռ, կայնե քյաղքյի օրթեն

կփարատի, կասի. «Խաբար տարեքյ ծեր թակավորուն, ասեքյ, պսակվելու գյալխ չի, կոիվ կուզեմ, կոի՛վ»:

Թակավորն ի, որ էսա խաբար կլսի, թյուքյ մեչ պերնին կչորնա, ամր կանի ուր խաս ասքյըրին, որ հյուչյում անեն վեր էտա մարթուն, սպանեն: Ասքյըրներն են հյուչյում կանեն, աման փայդեն ինչ, ճանճի պես կճարդըվեն, խաբուր կտանեն թակավորուն, թե թակավոր ապրած կենաս, քո ասքյըրներ բիթուն կընացին ճանճի պես կոտորվան, չեն կանա վեր էն մարթուն: Թակավորն ի, որ էսա պյնն կլըսի՝ մունջ բիթուն-բիթուն ձղըմներ կկոտրի:

Էսա թակավորու սոլ շիտկողն ի, որ կտիսնա, թե թակավոր շըշկըռե ևստե, կուգյա մեյ խատ թըմմնդեմ կթըլի թակավորուն, կասի. - Թակավոր ապրած կենաս, զիկ իզին տուր, ես էրթամ խետ էն մարթուն կովեմ:

Թակավորն ի, որ էսա խըբըր կլսի, շատ կուրախնա, կասի. - Այ ջահել տղա, որ տյու էսա մարթուն հաղթիցեր, էսա բըլեն իմ գյըլխուց ձզըտիցեր, ես իմ մեկ խատ ջահել ջիվան քուր կուտամ քյե, քյե կանեմ զիկ փեսա-սնդրազամ:

Թակավորու սոլ շիտկողն ի, կէրթա, կկայնի էսա լաճու դռնաճ, կասի. - Է՛յ, բըբըգյիթ տղա, ընչի՞ էտա խեղճ մարթերաց արնի տակ կմտնես, կայնի, որ տյու շատ կտրիճ մարթ ես, արե ես տյու մենակ կոիվ անենք, վով որ մեյ մեկէլու թըլից գյետին, էն հաղթողին խալալ ի էն էնողի արուն:

Թակավորու լաճն ի կասի. - Ծատ աղեկ, առ էսա էրկսից որ որ կուզես, կուզես գյոտզն առ, կուզես թուր, կոիվ անենք:

Թակավորի սոլ շիտկողն ի կասի. - Չէ՛, ախպե՛ր, էտա խալալ չէլնի, գյոտզ էննն թուր խետ մեկ մեկու կոիվ չեն կանա անեն, արե տյու էրկուսն էլ տիր մեկ թըրըֆ, իս տու ծեռնով գյուլաշ թըլենք:

Թակավորու լաճն ի կասի. - Ծատ աղեկ, թող ընկուն էլնի, - գյոտզն էլ, թուրն էլ կթըլեն գյետին, կխասնեն տեխ մեյ մեկ: Խետ որ իսոնքյ կխասնեն տեխ մեյ մեկ թակավորու սոլ շիտկող աչք բիրղնն կինի թակավորու լաճու ճակտին, կտիսնա, որ էսա մարթու աչ ունքի վեր, ճակտին վերեն խին յարեմ տեղ բըլլու կանի, մեյ խատ զինքյ ուր դյուշմիշ կէլնի, կասի. «Էնօր որ ես կննցի էն երկիր, էն թակավորու լաճու խետ կոիվ արեցի թըլեցի գյետին, ինոր ճակատ կոտրավ, աման, որ ժրավ էն յարի տեղ բըլու կաներ, չէլնի՞, թե էսա իմ ախպերագիրն ի, էն թակավորու լաճն ի»: Մեյ խատ էլ խորոտ թըյմեն կանի ծեռքեր կթողնի պնց, կիրիշկա իսոր իրես, կասի. - Ախպե՛ր:

Թակավորու լաճն ի, մեյ խատ խորոտ էսա մարթուն թըյմեն կանի, կտիսնա, որ էսա գյեո ուր ախպերագիրն ի՝ էն բնզրգյննի լաճն ի, կպոոա. - Ախպե՛ր, - կինեն մեյ մեկու վիզ, մեյ մեկու կպաքեն, կուրխնան:

Թակավորու լաճն ի, բնզրգյննի լաճուն կպատմի ուր գյըլխուց ընցած տսւոցած, կասի. - Վալա՛, հալ-հեքյաթ էսա Ոսկի ծամ խանըմ, որ կա իմ կնիյն ի, մեյ խատ ջատու պառավըմ էկավ խափէլութնով փախցուց իպե:

Բնզրգյննի լաճն ի, որ էսա կլըսի, համան կխասնի թակավորուն կպոնի խավու պես վիզ կքյաշի, թուր կառնի, կխասնի, որ քյաղաքյի ննհալին բիթուն ճնրտի, թակավորու լաճն ի, կխասնի իսոր թե կպոնի, կասի. - Էս ննհալին մե ի՞նչ ի արե, մեղավոր թակավոր էր, էն էլ զաթի ուր բըլեն կընտնվ:

Կէրթն կմտնի Ոսկի ծամի էօղեն:

Ոսկի ծամն ի, որ իսոր կտեսնա, զեհիրի կադսւխ կտըփի գյետին, կխասնի կփա̈թթվի ուր իրկան վիզ, նոր խար խարսնիս կանեն, կպսակվեն:

Քյանիմ օրից սորա, թակավորու լաճն ի բսւզրգյանի լաճուն կասի. - Ախպե՛ր, արե, տյու էլ էսա թակավորու քյվորն առ, էլի էսա երկրի թակավոր, ես էլ առնեմ իմ կնիկ, էրթա̈մ իմ խոր երկիր, մկա վո՞վ կիտի իմ խեր սա՞ղ ի, թե՝ չէ: Վարհասըլի կպերեն էսա բա̈զրգյա̈նի լաճ կպսակեն վեր էսա թակավորու քյուրոչ, կանեն էտա երկրի թակավոր, ինքն էլ կառնի ուր Ոսկի ծամ խանըմ, ուր ախպորագյրին կաց պա̈րիվ կանի, կէրթա̈ էն Ոսկի ծամի քյաղաքյ, էն տեղ ինչ կա̈նղա̈ր ոսկի, արծաթ, ակնունք, ջավահիր, որ կեր, կպսւռնսւ ուր ըղտերաց, կէրթա̈ ուր խոր քյաղաքյ:

Թակավորու լաճն ի, որ կխասնի ուր խոր քյաղաքյի մոտ, խա̈բա̈ր կտանեն թակավորուն, կասեն. - Թակավոր ապրած կենաս, քյո լաճն էկավ:

Թակավորն ի, թե ուր ըխթիարութնից, թե՝ մա̈ռա̈խից բըլխիրեր մնացեր էր, խետ, որ կլսի ուր լաճն էկավ, կբոռա. - Աշո՜տ, Աշո՜տ, - խոգին կուտա:

Թակավորու լաճն ի, կուգյա̈ կտեսնա, որ ի՞նչ, ուր խեր գյետ մեռեր ի, կտըփի մեչ ուր գյըլխուն կուլա̈, կմըռմըռա, քյառսուն օր սուք կպախի: Քյառսուն օրից սորա, նոր կօծվի թակավոր, Ոսկի ծամն էլ կանի թակուհի:

Ինոնքյ կխասնեն ինոնց մուրազին, տյուքյ էլ խասնեքյ ծեր մուրազին:

